ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2024-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի հաստատման նախագիծը» ներկայացվում է ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու հաստատմանը, հիմք ընդունելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, 35-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 27-րդ և 27.1-ին հոդվածների դրույթները: Տեղ համայնքի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրում արտացոլված են վարչական և ֆոնդային մասերի եկամուտները և ծախսերը ՝ ըստ ձևավորման աղբյուրների, ըստ եկամուտների հավաքագրման համար պատասխանատու ստորաբաժանումների, ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման, ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման: Միջնաժամկետ ծախսերի ծրագրի յուրաքանչյուր հատվածում ներկայացված են 2022 թվականի փաստացի, 2023 թվականի հաստատված և 2024-2026 թվականների կանխատեսվող ցուցանիշները:

Համայնքի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ներկայացվող ծրագրով ապահովված է համայնքի բյուջեի շարունակական աճը: Տվյալ գործոնն ապահովում է համայնքի սեփական եկամուտների լիարժեք հավաքագրման հետևողականությունը, տարիների կուտակված ապառքների բեռի թոթափման որդեգրած քաղաքականությունը: Ասվածի ապացույցը ակներև ներկայացված է ստորև՝ վերջին երեք տարիների սեփական եկամուտների հավաքագրման հաստատված պլանների և փաստացի հավաքագրված գումարների տեսքով.

ժամանակահատվածը	2020թ.	2021թ.	2022թ.
Սեփական եկամուտների հաստատված պլան	64,842,700.00	66,244,800.00	73,897,200.00
Եսփական եկամուտների փաստացի հավաքագրում	45,646,288.00	40,952,804.00	84,188,627.00

Եկամտային կանխատեսումները կատարվել են հաշվի առնելով առանձին հարկատեսակների մասով հաշվետու տարվա բազային թվերը և կանխատեսվող հավաքագրվելիք ապառքները:

Միջնաժամկետ ծախսերի ծրագրի ծախսային քաղաքականությունը շարադրող մասը կազմվել է հիմք ընդունելով ինչպես նախորդ տարիների կատարած ծախսերը, այնպես էլ համայնքի առաջ ծառացած նոր խնդիրների լուծման համար անհարժեշտ ֆինանսական միջոցների կանխատեսումները, համայնքի կողմից կնքված և կնքվելիք ֆինանսական պատասխանատվություն առաջացնող պայմանագրերը, որոնք տարածվելու են նաև հետագա տարիների վրա: Հաշվի են առնվել նաև համայնքից սնվող համայնքային ոչ առևտրային հիմնարկների կողմից ներկայացված ծախսային հայտերը:

2024 թվականի տարեկան կանխատեսումների ֆոնդային բյուջեի հաշվեկշռում ներկայացված են 2024 թվականի նախատեսվող սուբվենցիոն ծրագրերը:

Համայնքի բյուջեի ծախսային ուղղություններով թվերի կանխատեսման համար ազդող գործոններ են հանդիսացել.

- Տեղի համայնքապետարանի աշխատակիցների ավելացումը, որը տանում է համայնքում գործազրկության մակարդակի կրճատմանը և համայնքապետարանի կողմից իրականացվող աշխատանքների արդյունավետության բարձրացմանը,
- աշխատակազմը տեխնիկապես վերազինելու անհրաժեշտությունը,
- արտաքին լուսավորության պահպանման ֆինանսական միջոցների ավելացումը՝ պայմանավորված Կոռնիձոր-Տեղ ավտոճանապարհահատվածի լուսավորման աշխատանքների հետ,
- որպես սուբսիդիա տրվող ֆինանասական միջոցների ավելացումը՝ պայմանավորված ավտոպարկի համալրմամբ,
- պատերազմի վտանգը՝ ինչի արդյունքում նախատեսվել են միջոցներ քաղաքացիական ռեսուրսների անվտանգության ապահովման , ապաստարանների կառուցման համար:

Տեղ Համայնքի ավագանու հավանությանն է ներկայացվում միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հատատելու որոշման նախագիծը և միջնաժամկետ ծախսերի ծրագրի սահմանված ձևաչափը:

ՀՀ Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի

գլխավոր մասնագետ-հաշվապահ՝ Ա.Ղարագյոզյան